

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՄԵԾԱՅ

ԹՈՐԹՈՒՄ

Բատ հիւսիսոյ արևելից գաւառին կարնոյ՝ անցեալ փոքր մի անդր քան ըզդիւղն Գղըքիլիսէ, ակներեւ տեսանի սահմանն որ բաժանէ զկարին 'ի թորթումայ՝ ուղղագիծ բարձրութեամբ գետնոյն. յորմէ և անդր ամենայն ջուրք որ 'ի լերանց իջանեն՝ ընդ թորթում ընթանան, զի յատակ գետնոյն և ձորոցն առ հասարակ յոյժ զառ 'ի վայր իջանէ, այնպէս զի և գագաթունք լերանց թորթումայ չհաւասարեն գետնոյ սահմանազիսոյն. յորմէ դիւրաւ գուշակի բարձրութիւն կարնոյ գաւառին, և հիացուցանէ զտեսանելիսն անընդմիջական այլատարագութիւն բնութեան կրկին գաւառացդ, առաջնոյն ցորենոյ և գարսոյ առաւելութեամբ միայն պարծեցեալ, այլովն ամենայնիւ յոյժ ստորին գոլով: իսկ երկրորդս տեսարան յանդիման առնէ այնպիսի. յորում 'ի բազմակերպ զանազանութենէն չզգայ ոք տաղտուկ բնաւ. զի եթէ դաշտորէից ոք ցանկանայցէ՝ ոչ սակաւս գտանէ անդէն, ոչ ամենեին տափարակս այլ մանր և վարկպարազի բլրակզ զուարճացեալս. և եթէ ձորոց և խոխոմից, առուակաց և կարկաջասահ գետոց ուրուք իղձ լինիցի՝ անբաւս տեսանիցէ: Զե 'ի սահման հասեալ բլրազարդդաշի՝ ընդ. առաջ լինին ձորք փոքրունք, զուարճալիս առ կողիւք ունելով խիտ առ խիտ գարեանդս, ճանապարհ հորդեալ հեղասահ ջրոց օձապտոյտ ընթացիւք, որպէս ինչ բնութեանն դիրս ներդործեալ է 'ի նոսա: Մինչև անցեալ ընդտակաւս 'ի բազմութենէ մանունց այտի ջրոցդ, բացեալ լինի ընդ մուտս մանրաձորոցն մեծն այն և լայն ձորամէջ, ընդ որ համանուն գետն թորթում մանուածաւալ խոխոմամբ պտոյտքեալ անցանէ, պատեալ երկուստեք 'ի լերանց, ուրեք բարձր և այլուր խոնարհ դրիւքն, ուրեք 'ի թփոց և 'ի մայրեաց անտառացեալ, և ուրեք խոտաւէտ արգաւանդութեամբ յարօտ պաճարաց: Հասեալ 'ի միջոց գաւառին այլ տեսարան ահեղ ակներեւ լինի. լերինք ապառաժք ամենեին լերկ 'ի դալարւոյ և 'ի դոյզն փոշւոյ՝ ուղղաբերձք մինչև ցգաղաթունսն. այլ ախորժէի թէ ոչ տժգոյն դեղնութեամբ երեւէին. ոմանց 'ի դոցանէ մասն մի վերուստ 'ի վայր պատառեալ, քանզի դիւրահերձ է և ոչ կուանելի բնութիւն քարանցն այնոցիկ, թեքեալ կայ առ 'ի կողաց լերինն. և ոմանց դարձեալ մասն 'ի դագաթանէն զերծեալ ցցեալ է արտաքս քան զերեսս լերինն. և այլում բովանդակ զանգուածն հերձոտեալ 'ի շերտս շերտս կամարասեանց շինուածոց նմանեալ: Տեսանին և այլք կիսով չափ բարձրութեանն կամարաձև խորտակեալ անկեալ 'ի վայր, վերնոյ մասինն անզերծ արձանացեալ 'ի տեղւոյն: Եւ զլուխ ահաւոր տեսարանացդ, զի յանհնարին բարձրութենէն բազբւմք 'ի քարալերանցդ զերեսզք իւրեանց վերուստ 'ի վայր 'ի մասունս մասունս խորտակեալ անկեալ են 'ի վերայ ճանապարհին անհեթեթմք մեծութեամբ և դիզեակք զմիմեամբք, իբրու թէ ակներեւ կարգեսցեն զառասպելեալ Ցիտանացն քարակուիւս: Արհաւիրք պատեն

ղանցաւորս յահեղ տեսարանացդ, մանաւանդ առ ոտիւք երկնաբերձ քարալերանցդ, զի և չիք այլ արահետ ճանապարհ. սակայն 'ի միւս կողմն դարձուցեալ զհայեցուածսն՝ նոր 'ի նորոյ ոգեսորի ցանկալի տեսարանօք ծառոց և պարտիզաց: Որպիսէ հեշտական տեսիլ արդարե վայրացն փափկութիւն՝ որով ճոխացեալ են ամենայն ձորամէջք գաւառիդ, մանաւանդ լայնարձակն այն հովիտ մեծի գետոյն. քանզի 'ի ստորոտէ լերանցն մինչև գետեզրն երկուստեք զարդարեալ են պտղատու ծառատնկովք, և երեւք գետնոյն կարճաբուն սիզովք կանաչացեալ: Արգասաւորութիւն պտղատու ծառոցն 'ի վեր թուի քան զսովորականն. հիաւքանչ իմն է ծիրանեացն բազմութիւն, ակաղձուն պտղովքն ուկեզունիվք ծանրացեալ 'ի գետին խոնարհեալ: Նմանօրինակ և բալ և հուն, բազմատեսակ շըրենիք, և թթենիքն անբաւ առատութեամբ. իսկ ընկուզենեացն չիք թիւ և համար, այլ խաղող սակաւ յոյժ: Թորթում պտղաւէտութեամբն շտեմարան եղեալ կարնոյ, ինքն զուրկ է յարգասաւորութենէ ցորենոյ. զի չկան նորա ընդարձակածաւալ դաշտորայք, և 'ի սահմանակցութեան անդ կարնոյ՝ ուր չգոն խիտ առ խիտ լերինք որպէս 'ի ստորին կողմն գաւառին՝ մեծաւ մասամբ արօտք են անասնոց. և բազում ուրեք ճահիճք 'ի բազմութենէ գետակաց որ 'ի լերանց իջանեն և որ առ տեղեաւն բղխեն 'ի բլրոց. նմին իրի բազումք 'ի գիւղօրէիցն գարեհացիւ շատանան:

ԶՈՒՐՔ. — Ընդ առատութիւն ջուրց և ընդ պատուականութիւն՝ ոչ ումեք 'ի գաւառացն նախանձի թորթում. զի գետն մեծ և որք 'ի ձորոց իջանեն գետակք՝ ոռոգանեն առ հասարակ զերկիրն. իսկ 'ի ժամանակի երաշտութեան ճարտարեն այսպէս. յանդաստան կամ 'ի պարտէզ՝ զոր՝ ոռոգանել կամիցին, զընթացս միոյ 'ի գետակացն խոտորեցուցեալ և առուակս բաժանեալ 'ի զանազան առաջս՝ լիով ոռոգանեն: Բաց 'ի ջրոյ գետոցն բազում ուրեք կան ինքնաբուխ աղբերք, ևս և 'ի գետեզերսն որիշ 'ի գետոյն. որք ականակիտ ցրտութեամբն և պատուականութեամբ գերազանցեն յոյժ յոյժ քան զայլս 'ի ջրոց:

ՎՃԱՆ ԵԽ ԶՐՎԵԺ. — ՄԵծի գետոյն թորթումայ անցեալ ընդ ձորս մանուածաւալ ընթացիւք և տակաւ մեծացեալ 'ի գետակաց որ երկուստեք ընդ ձորամէջս լերանց անցեալ խառնին 'ի նա, երթեալ մինչև հանդէպ իս գեղին լճանայ. և այլ տեսարան ահաւոր բանի գեղ անդ. բարձրաբերձ լերանց երկուստեք դիմարգել կանգնելով լճի մեծի, զորոյ զիսորութիւն չափեալ աւանդեն երբեմն 105 զրկաչափ լարիւ՝ և ոչ գտեալ զյատակն. երկայնութիւն նորա երեք ժամ և լայնութիւն հազիւ կիսաժամ. եզերք նորա քայլաչափ մի առ 'ի ներքս և ահա խորանդունդք են, որպէս զի թէ յանկարծ ուրք ուրուք գիծեսցին՝ անզերծ ըմբռնի: Արդ 'ի լիճն այն կամ 'ի վիչն անդնդախոր հոսեալ համօրէն գետոյն մեծի, 'ի հանդիպակաց ծայրէն՝ ուր երկուստեք լերինքն բլրացեալ և դաշտանան, անձկացեալ վերատին 'ի չափ լայնութեան գետոյն, և քառորդ մի ևս ընթացեալ մինչև ցքարափն, անտի ահեղ խոխոջմամբ թափի 'ի վայր իբրև 'ի քառասուն մեղրաչափ բարձրութենէ. և ահա անդ լրումն է ահեղ գեղեցկութեան բնութեան, և յափշտակին միտք 'ի զնին համօրէն միանդամայն փրփրադէզ կուտակացեալ գետոյն՝ վտակ առ վտակ անհատահոս խաղացմամբ և հեղեղաբար ընթացիւք վազելոյ, սաստկաձայն շառաչմամբ վիժանացն 'ի քարափանցն և ընդ


քարայատակն բաղիսելոց, և անսպառ ցնդմամբ ցողատարափոյ՝ իբրև զծխոյ կամ գոլոշեաց ընդ այերս՝ ի վեր և շուրջանակի զտեղեաւն՝ ի ցայտից ջուրցն հիւէտիպ մրրկելով յօդս։ իսկ հոսանք ջուրցն գետացեալ վերստին՝ անցեալ գնան ընդ հիւսիս՝ յԱրդուին, և անտուստ ՚ի Պոնտոս։

ԱԴՐԱՆՔ. — Երկու աղահանք են՝ ի գաւառիս թորթումայ, մին քարաղի մօտ առ գիւղն Ռապար, և միւսն ջրաղի ՚ի Պար գեղջն։ զերկրորդիս զնմանօրինակ սառուցանելոյն ստորագրութիւն հատուցաք ՚ի գաւառին կարնոյ։ իսկ առաջնոյն ոչ նոր ինչ տեսիլ է կամ օտար յայլոց աշխարհաց, ուր իցեն լերինք աղի, նոյն գունակ և աստ հատեալ են անցք յաղահանսն և գործաւորք աշխատին նդզք և մրճովք խարխալել զհատորս աղի։ — Զհրաշալիս բնութեան և զորս երկրագործին քրտամբք ՚ի կատարումն հասին՝ ստուերագրեալ մեր, տեսցուք և զորս ՚ի ձեռնարուեստէ զարմանալիք։

ԲԵՐԴԻՑ. — Բերդից ահաւորութիւն ՚ի թորթում կարծեմ զանցանէ յոյժ քան զայլոց տեղեաց. որոց թէպէտ և չիցէ ընդարձակութիւն մեծ, կամ պարըսպաց բարձրութիւն կամ ստուարութիւն քարանցն և որ այլ ևս այսպիսիք, այլ զի յատակ նոցա յորոց վերայ հիմնեալ են, դարաւանդք են քարալերանց ահեղ բարձրութեամբ և վախիւք շուրջանակի. ՚ի կողմն մի վերելս գտեալ ՚ի բնութենէ կամ ՚ի ճարտարութենէ ձեռաց և լիր արկեալ մինչև ցգագաթունսն հիմն արկեալ է նոցա. որպէս զի եթէ անցք վերելիցդ կացին միանդամ և քաջ պաշտպանեսցին՝ չիք հնար թշնամւոյ կուուան ոտից ունել առ տեղեաւն, քանզի և թնդանօթ կամ այլ գործի պատերազմաց սոնանել ինչ ոչ կարեն ապառաժ հիմանց նոցա։ Ոմանց ՚ի բերդիցդ գետնափոր ուղիք կան իջանելոյ ՚ի ներքուստ յեզր գետոյն վասն ջրոյ ՚ի ժամանակի պաշարման. զի բազումք ՚ի նոցանէ ՚ի գետափն կան և յանցս արահետ ճանապարհի. որպէս զի թշնամւոյն անհամարձակելի իցէ անցանել անդամ առ տեղեաւն. սակայն այժմ անբնակ ՚ի մարդկանէ են դրքա առ հասարակ։ Բերդորայքդ յանուանէ գիւղիցն յորս կան՝ և կամ ոչ շատ տարակաց են՝ ՚ի նոցանէ՝ անուանակոչին, որպէս ընկուռզկայ քերդ, իշկիձորոց քերդ, Քիւչիշտէրէի քերդ, Աղջրկոց քերդ, Ղալէ տիպի և որ այլն ևս։ Այլ գերազանցէ յոյժ քան զդոսա քերդն թորքումայ յոր անուն կոչի և գաւառն և ՚ի ստորև բերդին գիւղն, աւանացեալն երբեմն որպէս պատմեն, և արդ մի յաղատին գիւղօրէից՝ տամբք իբրև քսանիւք։ Մեծատարած է բերդս այս քան զայլս և ահեղ, հիմնացեալ յեզր քարափանն որ առ գետոյն, արկեալ պարըսպացն ըստ խոտորնակ ձեռոյ քարաժայուին. առաջին դուռնն ՚ի հարաւոյ է, յորոյ ՚ի ներքս կային այլ և այլ քարակերտ շինուածք և մատուռն մի, այլ արդառ հասարակ կործանեալ։ իսկ անտի զառ ՚ի վեր ուղի աւերակացն առաջնորդէ ՚ի ներքնաբերդն, որոյ պարիսաքք շուրջանակի անարատ կան. և ՚ի հիւսիսոյ կողմանէ արտաքուստ պարսպին են քարաշէն լայնանիստ աստիճանք սանդղոց անյարկ՝ ՚ի մեծէ բարձրութենէ անտի մինչև յեզր գետոյն, ուրանօր կան երկու հնաշէն բաղանիք։


ՎԱՐՈՐԱՑ. — Մինչդեռ չէն էր երկիր թորթումայ և ծաղկեալ քրիստոնէական կրօնիւք՝ շինեցան կրկին վանորայքն հրաշակառուցք. մին կիսաժամաւ հեռի ՚ի գեղջէն որ այժմ անուանեալ կոչի իօշք, և միւսն ՚ի գիւղն Խա-

իսու . իսկ եկեղեցիք և մատրունք , նշանաւորք և աննշանք ոչ սակաւք : Ժամանակ շինութեան նոցա անծանօթ մնայ առ այժմ , զի արձանագրութիւնք նոցա առ հասարակ վրացի են : Մնայ մեղ ուրոյն ստորագրել զնշանաւորադ :



ԷՌԵԱՑ ՎԱԽԻ . — Առաջին՝ որ ասի Լոշքայ վանք , կամ լոկ վանք , որպէս կոչի և 'ի Տաճկաց , շինեալ է 'ի վերայ բլրածև տափարակի զորով պատեալ են բարձունք և առ ոտիւք բարձանց պտղաւէտ ծառաստանք և ինքն 'ի միջավայրի նոցին ամբարձեալ : Շինուածոյն ձև զարմանալի է յոյժ և հոյակապ և ահեղ . կիսաբոլորն կամ թէ ասել խորշ խորանատեղւոյն , որ մի միայն է , հասեալ է մինչև ցրարձրութիւն եկեղեցւոյն . 'ի նմին բարձրութեան են և երկրին թեկն հիւ պիսային և հարաւային , նոյնպէս և միւս կողմն որ երկայնեալ ձգի յարևմուտու կոյս : Ի հաւասար բարձրութեան չորից կամարածև կողմանցդ՝ առ վերին ծայրիւքն շրջանակ ածեալ բոլորչի զոր վերամբարձ ունին չորեքին սիւնքն ահեղ մեծութեամբ , և 'ի վերայ շրջանակին ամբարձեալ կայ կաթողիկէն հոյակապ ուղղաբերձ ձևով , պատուհանս երկայնաձևս ունելով շուրջանակի , և ապա յամենայն կուսէ 'ի մի ամփոփեալ և աւարտեալ 'ի սրածայր : Ի նեղքին կողմն շրջա-

նակին, այսինքն է ընդ մէջ նորա և կաթողիկէին, ճեմելիք կան շուրջանակի: Առ խորանաւն երկուստեք աւանդատունք են կրկնայարկք յարևելս կոյս. և դարձեալ այլ աւանդատունք ընդ հիւսիս և ընդ հարաւ առընթեր կրկին թևոցն. և 'ի նոցանէ քարեղէն սանդղօք յերկորդսն անցեալ և անտի 'ի վերնայարկս առաջնոցն: Երկուստեք արևմտեան թևոյն են այլ ևս կամարակապ սենեակք կամ պահարանք այլ և այլ ձեռվք, 'ի հիւսիսայնոցն ոմն երկայնաձև և այլ ոմն քառակուսի և սիւնազարդ. և 'ի հարաւայնոցն ոմն քառանկիւնի և առ նովաւգաւիթ փոքր ընդ որ մի 'ի մոտիցն է եկեղեցւոյն, և առընթեր նորա միւս ևս սենեակ սիւնազարդ քանդակագործ պատկերօք և զարդուք 'ի սիւնսն: Չորս դրունք են եկեղեցւոյս, մի զորմէ արդ իսկ ասացի, և երկուք ևս ընդ հիւսիս և ընդ հարաւ 'ի ծայրա թևոցն, առ որովք սիւնազարդ հովանոցք են յարկածածուկք կամարաշէնք. և չորրորդն է աւագ դուռն յարևմուսու, և զուգահաւասար երկայնութեամբ որմոյ կողմանդ՝ այլ որմնածեալ է 'ի հանդիպոյ, անջրպետ 'ի միջի ունելով չորս և աւելի մեդր և կամար ածեալ 'ի վերայ, թէպէտ կործանեալ այժմ: Արտաքին երեսք որմոց եկեղեցւոյն երկուստեք խորանին խորշ գործեալ են անկիւնաւոր՝ հարուստ մի բարձրութեամբ, առ վայելզութիւն թէ առ այլ ինչ չունիմ ասել. նոյն ձեւ է և երկուստեք կրկին թևոցն հիւսիսայնոյն և հարաւայնոյ: ի հարաւային կողմն ուր աւարտի որմն յարևելս կոյս՝ 'ի վերայ ստուար վիմի կան բարձրաքանդակ պատկերք փառահեղ զգեստուք արևելեայց, և գլխարկ նոցա գտակաձև խոր և անփաթոյթ. 'ի ձեռին միում 'ի դոցանէ տաճարաձև շինուած մի, որ թուի պատկեր եկեղեցւոյն լեալ և ինքն շինող նորա անշուշտ: կան և յայլս 'ի կողմանց պատկերք Քրիստոսի և հրեշտակի և արծւոյ. այլ ամենայնն զուրկ 'ի ճարտար արհեստէ անդրիագործութեան. նոյնօրինակ և որ 'ի ներքս կան մնացորդ նկարածոյ պատկերաց սրբոց յորմն խորանին: Եկեղեցիս 'ի ձեռս ծաճկաց է այժմ. որոց զհարաւակողման թեն դուզնաքեայ որմով պատեալ 'ի ներքուստ և յարկեալ, և խցեալ զգուռն այնր կողման, վճարեն զաղօթս իւրեանց :



Քարընկէց մի հեռի յեկեղեցւոյդ յարևելս հիւսիսոյ այլ հոյակապ շինուած կայ, զոր յաւանդութենէ խոհարան ասեն լեալ վանացն. յերկուս մասունս բաժանի շինուածդ: առաջինն մեծ երեսուն մեդր երկայն և վեշտասան և կէս լայն.

Երկուստեք երկայնութեան նորա որմնագործ սիւնք են ութ , կամարաւ կցեալ առ միմեանս իւրաքանչիւր կարգին . այլ յարկ նորա փեալ է : Իսկ երկրորդն փոքր՝ և տափակաձև կամարն տակաւին անկործան և անսիւն . զսա հնձան կոշեն , յորում և են գետնաթաղ բղուկք : Ընդ ձոր մի արևելեան կողման եկեղեցւոյն՝ գետակիջեալ՝ իւրանց անցեալ գնայ : Յարձանագրաց եկեղեցւոյն շատք եղծեալ են . քանզի համօրէն շինուածն ոչ միայն ՚ի կակուղ քարանց է գեղնագյն , այլ զի և զրուածքն նկարածոյ են կարմրաներկ գումով . իսկ վիմաքանդակ և ոչ մի . որ յանձրեսոյ պատսպարեալն է , անեղծ կայ ցարդ . և որ այնպէս չէ , մի ՚ի քսանից հաղիւ նշմարի . զի և քարն՝ յորոյ վրայ գրեալն են , զերեսզին շերտ շերտ ՚ի բաց զերծեալ է ՚ի խոնաւութենէ օդոյն : Բայց կարևոր արձանագերն անեղծ կայ ՚ի վերայ հարաւային թեսոյ դրանն արտաքուստ , այն է (Թիւ Ա.) յորմէ ստուգի և ժամանակ շինութեանն և շինոյն : Աւադիկ արձանքն՝ զոր հաճեցաւ մեզ նօտրել և թարգմանել բարեկամ մեր քաջ վրագէտն Պրոսէ , և մեր ՚ի հայ փոխեալ կարգեսցուք զկնի բնագրին :

Ա. Ձո՞յցալյեծոտա լոտուսատա , ռոմելո Նյազե յոցըլոտա մո՞նո՞մու Ձու նուտա Հառոյմառտյօնենութեանու մոցարյոտա և նեյլուսա մուսատա յոցըլոտա և յիշյոտա զյուլոտա . ամուս Բմուզուսա և մյեծուսա և առիմյենույոտա , ու մյուեծուտա Բմուզուսա քյուզույլուսա իջնուսա լոտու մասնաւուտա . մաջլուտա Բմուզուսա մյելուսա շեռցրյօնուսաւ-

տա , Պիյցնուտա ու մյուեծուտա քոջեծույլուսա նատլուս մշյմյելուսատա , ու յոցըլոտա Բմուզատասա , ռոմելու շըյնույցան նատես ոյցնես լմյուտսա . ամատ յոցըլոտա

Բմուզատա և մոջոյցելուա ու և մյուեծուա ոիցնես լուց-ըշրջնուսանտա Պյոցտա իջնուտա մյեծուա ամուս Բմուզուսա և այդուսա , և ամուս մոջույլունու լուցես -

ԱԲայլուս ու մյուեծուա գյեցնանո Բմուզատա , զուտարցա Բյուուլ առես . գյեցնասա Բմուզատա զեսարյունուցտ : ամատ յոցըլոտա Բմուզատա և յուցուլոտա ամատ քոջեծույլոտա Պյոցտա իջնուտա շըյրցըլ զյեն և այդուսա Բմուզալուս Բմույցալուսա մուտաւ , և ամատ ոյցու յոցըլուս Բմուզանո Պյուիր Պյուցեն ու լմյուտ-ման Պյուիցնես առուացը

շեռցրյօնատա : մալուտա լուց-ըշրջեցըլուս մարտեւես օշուանացու-

სათა, ბაერაც ერისთავთა ერისთაგ—მან, დაგით მავისუროს—მან, ს.მება—მან
წმიდა—მან

სამწივე დაიფარენ მარჯვენითა თვესითა, და ოდიდენ თორთავე ცხოვრებათა. და მე გრიგოლ ღირს მუთ მსახურებასა ამას მათსა ღოთსა მიმართ,
და მე გიუ—

აგ და შესა ხედა მდეომი, და არწმუნა ღმერთ—მან კონებასა მათსა ერთგულობად ჩემი მონისა მათისად: ესე იუთ გალაცოზთა და მოქმედთა შიჩდი,
და აზავერთა მექმეშე—

თად, რომელ წელიწადსა წარევების დრამად : ტ : ათასი . ღვინოდ ფასი . ტ :
რკინად ღიცრა : ტ : სვარბალი ერიგი : ტ : ტ : ტ : გალაცოზი და სუროდ და
შპელელი რომელ მარადის შვრებთ—

და : ტ : ტ : ტ : კარი რომელი ქვასა კრებდა : ტ : ათ-რი და სხვად აზავერი
რომე გრიგოლ წმიდით სპონდისა კრებდა : ტ : სხვად აზავერი რო-
მელს და : ტ :

ა და... ერი და მოქმედი : ტ :

პ. + იესო ქრისტე. მეოხებითა
წმიდისა ღოთს შეო-
ბელისადთა და
წმიდისა იოგანე
ნათლის შცემე-
ლისადთა და
წმიდისა მელისა

ცხოვრებისადთა
· და უოველთა წმიდა-
თადთა დაიდენ
მეფენი ჩვენი წინაშე უ-
ენსა მაჟენე
ბელი ამის ეპლ-
ესიისანი ბაერ(აც)

გ. განვაშენე და შევპაზე .. წმიდისა წინა-მორბედისა საფასითა
სულ-პურთხეულისა ჯოჯიბ ჩაცრიკისადთა. აკურთხენ უფალო, ოდიდენ
ქთრონიგონსა სხვ ბერმ(ენთა)

Դ. յիշեցյ մյու լոտիսառ, աճոճյն մանանո նացրաց ճա ճազոտ
տունացը ընեցրեծաս . ի՞մոճառ նատլու մըյիլլո, մյուն ճա մցառ
գիլ ըյաջ միւն .
նայրնո ճա մեսեյրնո մատնո . ճաճյացն մամա մոյլլ ճա մամա ացանյ, ճա
ըրոյու շացլուսացան ծորուցուսացան .

Ե. ի՞մոճառ մարոնյ . ի՞մոճառ յրոնյ . ի՞մոճառ մըյօքյոնյ .

Զ. ✚ մյուսա եցան նացրաց ըժյացտալ յն տացեա .

Է. ի՞մոճառ ոչշոնո մմա - ի՞մոճառ նըլլյ . ի՞մոճառ նացլյ - շցլուսա .

Ը. մմածյլու իցյնու նա ...	Ժ. ի . մանաս ...
.... ալացու ճա մացուցրուս ...	ճա յրուստացու մաճե ...
.... լու ճա մալ ճա ...	ճոճյն ...
.... մջյ ի՞նամյ նյնսա զ ...	(ալմամյնյ) նյլու ամու ի -
Թ. աճոճյն մյունու իցյնու .	(մոճուսա) մըլլյեսոսա >

Թիւ Ա. ի վերայ հարաւային դրան եկեղեցրոյն . — Ողորմութեամբն Աստու-
ծոյ որ պահէ զամենայն երկիւղածս իւր, և յածողէ սիրելեաց իւրոց յամենայն
դործս բարութեան հաւատով (Սրբոյ երրորդութեան), բարեխօսութեամբ թա-
գուհւոյ մերոյ Սրբոյ Աստուածածնի . շնորհիւ կենարար փայտին, օգնականու-
թեամբ և միջնորդութեամբ փառաւորեալ Յ. Մկրտչին, և ամենայն սրբոց ողք
'ի սկզբանէ հաճոյ եղեն Աստուծոյ, 'ի փառս և 'ի գովեստ սրբոցս ամենեցուն .
սկիզբն արարին աստուածապսակ թագաւորքս մեր շինութեան սրբոյ տաճարիս,
'ի կատարել զտօնախմբութիւն և զյիշատակս սրբոցն, որպէս և գրեալն է, եթէ
Հաղորդեցարուք 'ի յիշատակս սրբոց . որոց ամենեցուն ըղձակերտք գոլով 'ի
պաշտօն՝ գերափառ թագաւորքս մեր, ոչ խնայեցին յինչս երկրաւորս, երկ-
նաւորին ակն ունելով՝ օգնականութեան սրբոցս այսոցիկ և բարեխօսու-
թեան առ Աստուած 'ի կրկին կեանս . օրհնեալն յԱստուծոյ Ատրներսեհ կիւ-
րապաղատ, բագարատ իշխանաց իշխան և դաւիթ Մագիստրոս . որոց հովանի
լիցի ամենասուրբ երրորդութիւնն և բարձրացուացէ կրկին կենաք : Եւ զիս զդրի-
գոր արժանի արասցէ կալ 'ի նոցա սպասու աստուածահաճոյ ձեռնարկութեանս,
որում կարգեալ եղէ վերակացու . քանզի հաճոյացոյց Տէր առ նոսա զհաւատար-
մութիւն ծառայիս նոցին : — Եւ այս են վարձք քարագործաց և աշխատողաց և

գրաստուց բեռնակրաց, որք յինէն մատակարարին. ամի ամի ի՛՛ դրամ. Ե՛՛ դինոյ. Երկաթոյ լոերս Ծ. ցորեան ՄԽ գրիւ. թիւ քարագործաց, հիւսանց և դարբնաց որ հանապազօր գործէին ձկ (կամ Ը.) Եղինք քարակիրք Լ. ջորիք և այլ բեռնակիր գրաստք Լ, որք բերէին զ(սպոնդիկ?) ՚ի Ս. Գրիգորէ. դարձեալ գրաստք բեռնակիրք . . . ձ . . . կ . . . և գործաւորք Զ:

Բ. Յաջակողմեան դրանդշոչ. — Յիսուս Քրիստոս, բարեխօսութեամբ Արբոյ Աստուածածնին, և Արբոյ Կարապետին, և Արբոյ Կենարար Փայտին և ամենայն սրբոց բարձրացո՞ւ առաջի քո զշինողս սրբոյ Եկեղեցւոյս զմագաւորսն մեր, զբագարատ . . .

Գ. Ի գոտոչ խորանաւեղոյն. — Շինեցի և զարդարեցի զ'(մատուռն?) Արբոյ Կարապետիս արդեամբք ամենօրհնեալ Զոջկայ պատրկի, Տէր Աստուած օրհնեա և բարձրացո զնա: Ի թուխ (զատկական) ՄԾԶ (1036), և Յունաց . . .

Դ. Առ պատուհանաւ խորանին արտաքուստ. — Քրիստոս որդի Աստուծոյ փառաւորեալ զծառայս քո Բագրատ և Դաւիթ կրկին կենօք: — Ս. Յովլ. Մկրտիչ, լեր բարեխօս և օգնական ազատաց նոցա և ծառայից, և պահեա յամենայն չարէ զհայր Մկրտիչ, զհայր Յովհաննէս . . . և զդրիգոր:

Ե. — Ս. Մարիանէ. Ս. Եռինէ (կամ Հեղինէ). Ս. Կատարինէ:

Զ. — Բագրատ . . . թագաւորի:

Է. — Ս. Յակովը Եղբայր Տեառն. Ս. Պետրոս. Ս. Պողոս:

Ը. Ի ձակաստ առագ դրանն, մնացուած յ' 30 տողից աղդականաց մերոց . . . կուրոպաղատաց և մագիստրոսաց . . . մինչև յաւիտեան . . . առաջի քո:

Թ. Առ քանդակեալ պատկերօք. — Բարձրացո զմագաւորս մեր:

Ժ. Ի զլուխ պատկերացն. — Ծառայ . . . իշխանաց . . . բարձրացո՞ւ . . . որ շինեաց զտաճարս այս սուրբ:

